

րակոյս նորանոր ուսումնասիրութիւններ լցու կտեսնեն եզ-
նիկի գործի վրայ:

Ար. Արեդիան.

Բերլին.

ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ.

12. Սմբատ Շահաղիզեան. — Մէ քանի խօսք իմ ընթերցողներին, Մոսկուա, 1903. գինը 60 կոպ.
13. Բագրատ Այվազեան. — Աւել յաղթանակ, Թիֆլիս, 1903. գինը 25 կ.
14. Տրիգուալիտի սպեциальныхъ классовъ Лазаревскаго Института Восточныхъ Языковъ. Москва, 1903. цѣна 1 р. 50 к.
15. Գ. Վաղարեան — Մեզուաբուժութիւն, Վաղարշապատ, 1903. գինը 50 կ.
16. Լ. Ն. Տօլստոյ. — Աստուծուն թէ մամոնային, Թարգմ. Մամբրէ վարդ. Վաղարշապատ, 1903. գինը 3 կ.
17. Ներսիսեան Հայոց Հոգևոր գպրոցի 1901—1902 ուսումնուական տարրուաց տեղեկագիրը, Թիֆլիս, 1903:
18. Լ. Տօլստոյ. — Մարդուս շատ հոգ է հարկաւոր, Թարգմ. Վրթանէո քահանայ Մովսիսեան. Վաղարշապատ, 1903. գինը 5 կոպ:
19. Մեծն Աղեքսանդր, Պատմական Կենսագրական տեսութիւն ուսուցապետ ԲԵՆԻԱՄԻՆ Վելեբրին Ռուսերէնից թարգմանեց Վրթանէո քահանայ Մարդարեան (Վաղարշապատ, 1903, 168 էջ, գինը 50 կ.): Աղեքսանդրի պատմութեան մէջ երեացել են արտասովոր ոյժի, հանճարի տէր մարդիկ որոնք աշխարհին ուսուանեցրել իրենց մտքի ոյժով, իրենց գործած գործերով: Այդպիսի անհամները վճռել են մի և երբեմն շատ աղեքսանդրի վիճակը ընդհանուր պատմութեան ընթացքի մէջ արմատական յեղաշբթումն, գալապլուս ստեղծել: Երկար գարեր արևելքը իւր ձեռին ունէր քաղաքակրթութեան ջահը, Բաքելոն, Ասորիք,

Եղիպտոս, Պարսկաստան, դուքս էին ազգեսին օսէնքներ թե-
լազըռում և, թէև փոքր Յունաստանը յաջողութեամբ վանելով
պարտկական արշաւանքները, հին աշխարհի քաղաքակրթութեան
կեզակէտը և նոր աշխարհի նախամայքը գուրծաւ, ազգեսի միա-
ձակը մինչեւ չորսորդ դարու սկզբեր նախ քան Քրիստոս իրենց
ձեռին պահեցին արևելքի աշխարհակաները: Սակայն չորսորդ
դարու կիսում տեղի է ունենում մի տրտասովոր աշխարհա-
ստան երեսյթ, Յունաստանի հիւսիսում գտնուող մի աննը-
շան և անյացա երկրի երիտասարդ թագաւոր, Աղեքսանութ-
յակեդոնացին հրապարակ է գալիս ընդմիշտ կոտրելու արե-
ւելքի ոժը և եւրոպական թարմ և ուժեղ ազգեսին իշխող
դարձնելու արևելքի վրայ: Աղեքսանոդիր ունեց եւը ժամանակի-
կատարելատիպ մարդու մեծագոյն բարեմանութիւնները, նա
անվեհէր քաջ էր, մտքով ոռւը և խեստ վճռողական, ամենա-
շատ զինուորականները մանկութեան օրից նրան պատրաստեցին
զինքի վարժութեան մէջ, իսկ հին աշխարհի ամենամեծ վիլի-
լիստիան՝ Արիստուէլը նրա հոգւոյ դաստիարակն էր: Աղեք-
սանոդը ծնուել էր՝ 356 թ. Ք. ա., 20 տարեկան հասակում
իւր հօր գահը բարձրացաւ, 23 տարեկան (334 թ.) արշաւանք
սկսեց Պարսից տէրութեան դէմ, միայն 35,000 զօրքի գլուխն
անցած և մինչև 323 թուականը, երբ տեղի ունեցաւ նրա
մահը, նա տիրել էր պարուկական լայնածաւալ տէրութեանը՝
Եղիպտոսից սկսած մինչև Կովկասեան լեռները, Փոքր—Ասիայից
սկսած մինչև Համարեա թէ Զինաստանի սահմանները: Սակայն
Աղեքսանոդիրն մեծացնողը, նրա արտասովոր յաջողութիւննե-
րին փայլ տուողը նրա վերաբերմունքն էր դէպի իւր հպատակ-
ները, նրա քաղաքակրթական մեծ ծրագիրները, որով նա ձըդ-
տում էր Եւրոպայի և Ասիայի քաղաքակրթութեան հասու-
նացրած պտուղները միացնել, ընդհանրացնել իւր հպատակների
մէջ և այդպիսով սկզբնապատճառ եղաւ հելլէնականութեան
նոր դիտութիւնների ծաղկման:

Ամբողջ գարեր Աղեքսանոդիր անձնաւորութիւնն ու գոր-
ծերը մարդկանց մաքի, երեակայութեան վրայ տհագին տպա-
ւորութիւն են գործել, հատորներ են կազմում նրա մասին թէ
հնում թէ ներկայումս գրած և պատմած վէպերը, առասպեկ-
ները, պատմութիւնները և ուսումնասիրութիւնները: Հայոց
դրականութիւնը անմասն չէ այդ շարժման մէջ: Ցիշենք
Սայն—Կալվիոթենէսի թարգմանութիւնը և նրա առթիւ կա-
տարուած ուսումնասիրութիւնները: Մեր առաջ գրուած
զիրքը կարելի է ուսումնական դիրք կռչել, ի նկատի առնե-

լով, որ Աղեղնանդրի պատմութիւնը վերաբարուած է գիտնականների ուսումնասիրութեանց արդիւնքների ճշգրիտ հետեւզութեամբ, բայց մինչնոյն ժամանակ ամբողջ գրութիւնը կարդացւում է մեծ դեւրութեամբ և յարմար է ընթերցող մեծ հասարակութեան համար: Բնագերը գերմաններէն է, հայերէն թարգմանութիւնը կատարուել է ռուսներէնից, բնականաբար ոչ յօդուած հայերէնի մաքրութեամբ: Լեզուի մէջ կան խորդութիւններ, չհամարցուած մասներ, անունների անձշտութիւններ (Հեմուս թերակղզու փոխարէն միշտ գրւում է Գէմուս, ռուսերէնի տառապարձութեամբ), առկայն նկատելի անշան թերութիւնները լիուլի ծածկւում են թէ նիւթի գեղեցկութեամբ և թէ մանաւանդ պատմած դէպքերի վերին ոտտիճանի հետաքրքրութեամբ: Գիրքը հայր Վլթանէս քահանայի առաջին եռախայրիքն է, նա այդ նուիրել է Ս. Էջմիածնին նրա 1600 ամեակի առթիւ, լի երախտագիտութեամբ առ մայրն եկեղեցեաց հայոց, որոյ հովանու տակ սնուել և գաստիաբակուել է:

20. Հ. Գելցեր, Համառօտիքին Բիւզանդական կայսրների պատմութեան, գերմաններէնից թարգմանեց Մեսրոպ վարդապետ Տէր-Մովսէսեան (Վազարշապատ, 1901 թ. 6+514 էջ, դինն է 1 ր.): Այդ գերքը մենք թարգմանեցինք բնագրի լոյս աեսած տարին 1897 և մաս մաս տպագրում էինք Արարատի մէջ, մինչեւ որ վերջինիս ծրագրի փոփոխութեամբ ստիպուած եղանք առաջի երկու թերթից յետոյ յատուկ գրքով տպագրել: Յաճախ բացակայելով Էջմիածնից, հնաւորութիւն չենք ունեցել հետեւելու նրա սրբագրութեան և միանդամայն մեղնից անկախ՝ կարողացանք լոյս հանել միայն այս տարի, թէև տպագրուած էր 1898 թ. և յատուկ անուանց ցանկը կազմուել էր 1900 թուին:

Գելցերի գրած Բիւզանդական կայսրների պատմութեան համառօտութիւնը թարգմանելիս ի նկատի ենք ունեցել այն մեծ առնչութիւնը որ նրա հետ ունի Հայոց պատմութիւնը և գլխաւորապէս այն պատճառով որ այդ գերքը մասամբ Հայոց պատմութիւն է: Բիւզանդական պատմութիւնը դեռ լու չէ ուսումնասիրուած, նիւթերը չափազանց շատ են իոկ յատուկ նրանցով պարապողների թիւը փոքր: Առ այժմ քանի գնում ուսումնական հետազոտութեամբ աւելի և աւելի է պարզում, որ Բիւզանդական կայորութիւնը զուտ յունական ստեղծագործութիւն չէր, այլ բաժանուելով հռովմէական մեծ կայսրութիւնից, աէրութեան արեւելեան սահմաններում արեւելեան աղգերի գործունէութեան մի նոր որրան դարձաւ: Յոյներ, Սերեցիներ, Հայեր, Խլեւըացիներ, Սլաւոններ և Գեր-

մանացիներ ու Ֆրանկիներ հաւասար ոյժով և տարբեր յաջողութեաններով հըապարակ էին եկել մօցելու և ամենաընդունակին և յաջողակին էր վերապահուած յաղթութեան դափնին—կայուեական թագն ու դահը: Հարց չկար թէ ինչ ազգութեան ու ծագման է պատկանում կայութը և այդ հանգամանքի շնորհիւ Քիւզանդական կայուների հարստութեան ներկայացուցիչները պատկանում են ամենատարբեր ազգութիւնների:

Աղբերի այդպիսի հաւասար մրցման մէջ հայերը առաջնակարգ, եթէ ոչ առաջին տեղ են բռնել: Ն. Գելցերը ուրիշների հետևողութեամբ նիւզանդակական կայութեան ծաղկման ամենաբարձր շրջանը համարում է Հայկական հարստութեան ժամանակամիջոցը: Այդ պատմութիւնը խրատական է նաև այն կողմից, որ ներկայ ժամանակների ազգակերութեան փոխարէն տեսնում ենք որ հին դարերում ասպարէզը վերապահուած էր լաւագոյնին:

21. «Հայ Աօւլիներ—Ցանկ», երեք օրինակ ուղարկուել է մեզ «Ազգագրական Հանդիսի» խմբագրութեան կողմից, որ ինչպէս նկատել էինք մեր վոքրեկ գրախօսականում (էջ 352) չեր տուել բուն գրքի հրատարակութեան հետ: «Հայ Աշուղներ» գերըք գնազները ոտիպուած են յետին թուով ձեռք բերել նրա «ցանկը»:

22. «Պատմութիւն Հայոց ի սկզբանէ մինչ յԱրշակունի հաւըստութեան հաստատութիւնը գրեց» Սկսնակ Բանասէրք (Պարիս, 1903 30 էջ, մի էջ տպագրական սխալ, արտատպութիւն «Բանասէր» հանդիսից): Վերնագրի մեծահնչեն լինելը կարող է ընթերցողին շփոթել գրեոյնիո ուահմանափակ նիւթի վերաբերմամբ, որը անկախ վերնագրից, Սկսնակ հեղինակի կողմէց ներկայացնում է սիրուն ամփոփումն հայկական նախապատմական շրջանի մասին եւրոպացի մասնակէտների յայտնած կարծիքների: Այդ վոքրելը մենք խրախուսանքի արժանի ենք հարացում այն աեամկէտից, որ առանց այդպիսի աշխատութիւնների զուտ մասնագետական և գլխաւորապէս օտար լեզուներով գրուած ուսումնասիրութիւնները այլապէս անմատչելի կմնան ընթերցողների մեծամասնութեան: Աշխատութեան առաջի գլխում բայցարուած է հայ և արմենիա բառերի ծագումը և առաջ բերուած նրանց մասին եղած հաւանական կարծիքները, երկրորդում պատմուած է նախահայկեան, կամ խալդեան Եշխողների դործերի համառօտութիւնը, իսկ վերջը նկարագրուած է նայն շրջանի ներքին կեանքը, համեմատութեամբ հարեան հին ազգերի կենցաղին՝ Առընատանը, Մաքա-

տանի, Պարսկաստանի, որոնց քաղաքակրթութեւնը խոր հետքեր է թողել հին Հայաստանում։ Հեղինակիս ջանքը եղել է անաշխադիք չթողնել հայ անցելի մասին գրող մասնագէտները ստածները։

23. «Հայ որբերուն Բարիզի առեւանգումը, Հաւաքածոյ Որբանոցիս դէմ եղած յարձակմանց տեսչութեան կողմէ արուած պատասխաններու» (Անտոն, 1903, 40 էջ)։

24. «Մամոնայի Խնկարկուներ, Արքավաճառ պատուելին և ապեկար առաջնորդը, գրեց Միսաք Տէր Միքայէլեան» (Բարիզ, 1903, 44 էջ, գինն է թուրքիա՝ 40 փարա, օտար Երկիրներու համար 50 սանթիմ)։ Երկու գրքոյներն էլ նոյն նկարին են վերաբերում, առաջինը կ. Թումայեանի հրատարակածն է ի պաշտպանութեւն իւր գործողութեանց, երկրորդը ամբողջովին մեղադրանք է Պ. Թումայեանի դէմ։ Այսպիսի գրուածքներ կարդալիս զարմանում էք, թէ որշափով ընդունակ են մարդիկ իրողութեւնները յեղաթիւրելու, իրենք իրենց գովելու և ուժիչներին պախարակելու և այդ ըոլորը յանուն ճշմարտութեան, յանուն գաղափարական ձգառումների։ Գրողները միայն մի բան են մոռանում, թէ ընթերցողը ի՞նչ միջոցի պիտի դիմի այցքան կը քու գրուածքների միջից ճշմարտութեւնը երեան հանելու։ Անուրանալի է արդար քննադատութեան մեծ օգուար, բայց նոյնքան ակներև է երբ քննադատութեան տեղը բռնում են անձնական մետումներից առաջ եկած վայրախօսութիւնները։ Որբերի խնդիրը վաղուց է հրապարակի վրայ գրուած, գրեցին Թումայեանի դէմ, նա պաշտպանուեց, մենք փորձեցինք հետեւ թեր և գէմ գրուածքներին, բայց այսօր էլ, եսք յօդուածներին փոխարինում են առանձին գրքոյներ, խղճի մաօք չենք կարող ասել, թէ խնդիրը մեզ համար պարզուել է։

16. «Մրգավայրեր, Տեղագրութեւն Վասպուրականի—Վանայ նահանգի գլխաւոր վանօրէից Եկեղեցեաց և ուսումնարանաց, աշխատասիրեց Գէորգ Շերենց» (Թիֆլիզ, 1902, 161 էջ, գինն է 40 կ.), մի կարևոր և օգտակար աշխատաւթիւն, եթէ կատարողը կարող և ձեռնհաս անձ լինէր և շրաւականարար իւր նկարագրած 76 սրբավայրերի մասին այնպիսի տեղեկութիւններ տալ, որոնք շատ քիչ կապ ունեն գրքի վերնագրեն։ Կամ նկարագրութիւնների մէջ չկան պատմական անցքերի յիշատակութիւն, եկեղեցիների և վանքերի վրայ գտնուող բազմաթիւ արձանագրութիւնները չեն շարժել հեղինակի հետաքրքրութիւնը, անցիշտակ են մնացել նաև վանքերում եղող ձեռագրերը։ Գիրքը յիշողութեամբ է կազմուած, սահմանափակ

պատրաստութիւն տէր մի անձից, մինչդեռ, քանի ող Ալիշանը շի առւել «Վասպուրական» հասորը, ամեն քայլափոխում այդ պատմական մեծ նահանգի տեղեկադրի պահասութիւնը զգացւում է զօրեղ կերպով:

25. «Քաջերունի, Հայկական սովորութիւններ» (արտասպուտած Աղգագըական Հանդեսից) (Թիֆլիս, 1903, 128 էջ): Պաջըերունին մի ժամանակ Արարատի ամենաեռանդուն աշխատակիցն էր. գեւ պատճենական հասակից յիշում եմ թէ ինչ պիտի ոգեսրութեամբ կարգում էի նրա պիեսները և ճանապարհորդական նկարագրութիւնները: Երկար ժամանակ է նա կարծես թողել եր գրական առարգելքը, ինչպէս մեր աղքատիկ գրականութեան մէջ գործողներից շատերը: Յիշտառակուած աշխատութիւնը վկայում է, որ թերթիս հին բարեկամը նորից զրիչ է ձեռք առել կարգաւորելու երկար ճանապարհորդութիւնների ընթացքում իւր ժողոված հարուստ ժողովրդագրատկան նկատերը և մաս մաս հրապարակ հանելու: Նիւթերը ժողովուած են երեանի, Թիֆլիզի, Բագուի նահանգներում և Կարսի վիճակում, հրատարակութիւնը կատարուած է յայտնի ծրագրով և ինչպէս երեսում է նիւթերի գասաւորութիւնից, մշակումը կատարուել է յատուկ խնամքով: Նիւթերի մէջ առաջ դալիս են. Տօներ, ապա Ընտանեկան կիանք եւ Սովորութիւններ, Նահիկեր, Երեխայոց Ասելիքներ, Հանելուկներ, Արագախօսարիւն և ի վերջոյ Աղօրեններ:

26. «Թյուատ Դափիր, ժողովրդական վէպ, գրի առաւ Ա. Արեգեան» (արտատպուտած Աղգագըական Հանդեսից) (Թիֆլիզ, 1902, 73 էջ, զինն է 30 կ.): Այս վէպի մէջ զըի է առնուած յայտնի վէպի մի նոր վարիանար, որ պատմել է Մոկաց երկը Առինջ գիւղացի Յովակիմենց Մանուկի սրգի, 60 տարեկան ժերունի Դազարը: Գրքոյին մէջ կայ մի երկրորդ պատմուածք «Սահմանյ ծոեր» արարատեան բարբառով, որը պ. Արեգեանը լսել և զըի է առել էջմիածնում, Քանաքեռի մօս գտնուող Գովի գիւղացի Առառաջատառութենց Մկրտչից, միայն թէ Մկրտչը լսել ենքը վէպը լսել է իրենց գիւղը Տաճկահայսատանից գաղթած ժերունիներից: Ժողովողը իւր աշխատութիւնը նուիրել է «ի տէր հանգուցեալ Տ. Տ. Գէորգ Դ. մէծագործ Հայրապետին»:

27. «Շենի Ալբու գեղարուեսական, ֆոտոտիալ Դնունի — Մարիմ» (Թիֆլիզ, 1903 թ. զինն է 1 թ. 50 կ.): Պ. Գնունու լուսատիկ ալբոմը բազկացած է տասը տախտակից, իւրաքանչեւր նկարը 18×24 ս. մէծութեամբ: Ալբոմի առաջի տետրը, որ պիտի ունենայ շարունակութիւն, ներկայացնում է գլխաւ

ւորապէս Անիի և շվակայքի եկեղեցների նկարները, թէե մենք չիմացանք թէ ինչ ծրագրով են և միասին հաւաքուած: Նկարների երեսին բարակ թուզթէ է կպցրած և նրա վրայ հայերէն, ոռւս սերէն և ֆրանսերէն պրուած է նկարի անունը, մինչ մեր կարծիքով յարատեռութեան համար լուր կլինէր բուն նկարի տակը տպել այդպիսի մակագրութիւնները, որպէս զի այդ թերթը պատրուելիս պատկերի անունը անցիշատակ չմնայ: Պ. Գնունու փորձը շատ յաջող կարելի է համարել, մինչև այսօր մենք չունինք մեր բազմաթիւ հսութիւնների գնի կողմից դիւրամատելի և գեղեցիկ հրատարակութիւնները, նոր ձեռնարկութիւնը խոստանում է երկու կողմից էլ մեզ միանդամայն բաւականացնել: Սրտանց ցանկանում ենք, որ Պ. Գնունու սկսուածքը յաջողութիւն գտնի, մանաւանդ եթէ նա կարողանայ իւր գործի մէջ որոշ պատմական—հնագիտական ծրագիր մտցնել:

ՄԱՐՈՎ ՓԱՐՊԱՎԵՏ.

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Բուսական բագաւորութեան հսկաները.—Երոպայի գարանը կաղնիներն ու լորիները թէպէտ պատկառելի մեծութիւն և ժաւալ ունին, ոսկայն համեմատած Հիւսիսային Ամերիկայի անտառներում աճող ծառերի հետ շատ և շատ փոքր են երեսում: Ընդհանրապէս Ամերիկայում բուսական թագաւորութեան տեսակներն արտասովոր զարդացման են հասել և դրա պատճառն այս աշխարհամասի հողի առանձին յատկութիւններն են: Յայտնի է, որ քաղաքակրթութիւնը Եւրոպայում անհամեմատ շուտ է սկսուել, քան Հիւսիսային Ամերիկայում: Ներկայումս Եւրոպայում բոլոր մշակելի հողերը հերկւում են, ինչպէս և առաջ, հին, պատմական ժամանակներում: Այսպիսով հազարաւոր տարիների ընթացքում վարուցանքսի չնորհիւ Եւրոպայի հողը սնըսարար նիւթերից զրկուել է: հետեւապէս և պտղաբերութիւնը